Առաջին անգամ ՖՀՄՍ-ների որդեգրումը

Ներածություն

2009 ֆինանսական տարին Հայաստանի բանկային հաստատությունների համար կդառնա առաջին տարին, երբ ֆինանսական հաշվետվությունները պետք է պատրաստվեն ՖՀՄՍ-ների կիրառմամբ: Անցումը ՀՀՀՀՍ-ներից ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների չի նշանակում պարզապես տարեվերջին ակտիվների, պարտավորությունների և սեփական կապիտալի չափման և ճանաչման եղանակի փոփոխում: ՖՀՄՍ 1-ը (Առաջին անգամ ՖՀՄՍ-ների որդեգրումը) պարունակում է բազմաթիվ կանոնակարգեր ՖՀՄՍ-ների կիրառմամբ առաջին ֆինանսական հաշվետվությունների կազմման վերաբերյալ, և դրանք պետք է կիրառվեն, եթե կազմակերպությունը ցանկանում է համարվել այնպիսին, որի ֆինանսական հաշվետվությունները կազմվել են համաձայն ՖՀՄՍ-ների:

Նոր ստանդարտների ընդունման հետ կապված տեխնիկական փոփոխությունները դժվարություններ կառաջացնեն կազմակերպությունների ղեկավարության համար, և այն խնդիրները, որոնք կապվում են առաջին անգամ ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ների համաձայն կազմելու հետ, չպետք է թերագնահատվեն: Այս խնդիրները պահանջում են համապատասխան պլանավորում, վերապատրաստում և մարդկային ռեսուրսների կառավարում: Այս կարճատև դասընթացը մշակվել է նշված գործընթացին օժանդակելու նպատակով:

Ի՞նչ կսովորեք այս դասընթացին

- Ինչպես պատրաստել սկզբնական ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը ՖՀՄՍ-ներով (մեծամասամբ սա կլինի 2008 թ. հունվարի 1-ը)
- Անցման օրվա դրությամբ գնահատականների վերաբերյալ կանոնները
- Անցման գործընթացը (հաշվապահական քաղաքականությունների ընտրությունը, ակտիվների և պարտավորությունների ճանաչման, չափման և ներկայացման փոփոխությունները)
- Համաձայնեցման հաշվետվությունների կազմումը, որոնք անցման օրվա դրությամբ համապատասխանեցնում են սեփական կապիտալի և ֆինանսական արդյունքների ցուցանիշները ՀՀ և միջազգային ստանդարտների միջև

Մեթոդները
Ուսումնական սեսիան հիմնվում է ՀՀՀՀՍ-ներով կազմած ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթի վրա: Հաշվետվությունները կլինեն ֆիկտիվ և կմշակվեն այնպես, որ ներառեն անցման հետ կապված խնդիրները, որոնք հնարավոր է առաջանան գործնականում: Դասընթանցի նպատակն է ուսումնասիրել յուրաքանչյուր հոդվածը՝ տող առ տող, հաստատելու համար, թե ինչպիսի փոփոխություններ են անհրաժեշտ սկզբնական հաշվետվությունը կազմելու համար և ինչ տեղեկատվություն պետք է բացահայտվի համաձայնեցման հաշվետվություններում:

Նախապայմաններ
2009 թ. կիրառվող ՖՀՄՍ-ների իմացություն, որը լինի համարժեք Այ էյ Բի կենտրոնի ՖՀՄՍ-ների վերջին ժամանակներում անցկացված դասընթանցերում ձեռքբերված տեղեկատվության

Օրը
2009 թ. Հոկտեմբերի 19-ին և 26-ին

Ժամը՝ 18:30

Արժեքը
15,000 ՀՀ դրամ (առանց ԱԱՀ)

Զեղչեր
Առաջին 10 գրանցվող մասնակցին կտրամադրվի 10% զեղչ